









ՔԱՂԱՔԱՂԱՐՈՒԹՒՒՆ

ՀԱՄԱՌՈՏ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՀԷՏԻՍԵԱՆ

1845 — ՌՄՂԲ



Դ Ե Ս Ի Ը Բ Ը Կ Ո Ւ Թ Ի Բ Դ  
Մ Ը Ն Կ Ը Ն Ց

Թ Ի Ի Գ

Ք Ա Ղ Ե Բ Ա Ղ Ը Ռ Ո Ւ Թ Ի Ի Ն  
Հ Ը Մ Ը Ռ Օ Տ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ Բ. ԿՐԹԱՆՆԵՐԻ ԲՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

RECEIVED  
JAN 10 1888  
U.S. DEPT. OF AGRICULTURE

RECEIVED  
JAN 10 1888

RECEIVED  
JAN 10 1888

RECEIVED  
JAN 10 1888



# ՔԱՂԱՅԱՎԱՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԵ Մ. Ա.



## ՀՐԱՄԱՆԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ  
ՏԵՍՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ԱՌԱՔԵԼԱՇԱԻՂ  
ԱՐԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

7456



## Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

1843 — ՌՄՂԲ

1848

1848

1848

1848

1848

1848

1848



1848

1848

1848

# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Քաղաքավարութիւնը ի՞նչ է :

1. ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ խօսքդ՝ խօրա  
թաղ ու գործքդ ճամբով ընելդ է :

2. Քաղաքավարութեան կանոնները բնաւ չիճանչ  
ցող մարդը իր գտնելած քաղաքին սովորութիւննե  
րուն մէջը սրահասութիւն ընելով ատելի կրկայ ամ  
մէնուն :

3. Պահասութիւններնիս չերեւցրնելու համար ամ  
մէն գործքերնուս վրայ պէտք է աչմիս չորս բանալ,  
պէտք է նաեւ ուրիշին պահասութիւնը ներել, ամմէն  
մարդուն իր տարիքին ու իր աստիճանին վայելիք  
յարգը պահել, ամմէնուն բարի կամենալ, բայց նա  
յելու ենք որ կամեցածնիս գէշ բան չըլլա՞ տէ՛ մենք  
աղէկ կարծած ըլլանք, ահա՛ ասոնք են քաղաքավարու  
թեան կամ տանկ ըսեմ՝ մարդավարութեան մեր ամ  
մէն մէկէն պահանջած գլխաւոր բաները :

4. խօսքերնիս ու գործքերնիս լսող տեսնողներուն  
մեղմէ դանգատելու առիթ մը չիտալու համար՝ ըլ  
գուշութիւն մը կայ որ կրնենք, ահա ան է մարդա  
վարութիւնը կրտէ՛ Վապիւյեր :

Մարդավարութիւնը շատ առաքինութիւննե  
րուն սրահասութիւնը կրնայ լեցրնել, վասն զի՛ շատ  
անգամ ընելիք բաներնուս գէմ կրկենայ, գէշ սով

րութիւններնուս ետ կրճգէ մեզ, չափել կշռել կուտայ մեզի խօսքերնիս ու գործած բաներնուս տակէն օգուտ կըհանէ ընկերներնուս :

5. Մարդավարութիւնը երկուք կըբաժնըվի . մէկին կըսվի սրբտանց մարդավարութիւն , որ քրիստոնէական կամ բարոյական առաքինութիւններէն առաջ կուգայ, այսինքն՝ խոնարհութենէն, աստուածսիրութենէն, պարկեշտութենէն ու բարեսիրութենէն . մեկալին ալ՝ երեսանց մարդավարութիւն կըսվի, որ անձնասիրութենէն, փառասիրութենէն ու շահասիրութենէն առաջ կուգայ :

6. Առաքինութեամբ մարդավար եղող մարդը բընաւ կոպիտ բաներ չըներ, իր ամմէն պահասութիւնը կը ճանչնայ, անոր համար շատ պարկեշտ կըլլայ, ուրիշին յանցանքը կըներէ . բայց իրեն էն պղտիկ յանցանքը անգամ չուղեր ներել : Վարեսէր ըլլալուն ուրիշները միշտ կը ջատագովէ ու զանոնք պատուելու արժան բան մը կը գըտնայ վրանին . ինչ աստիճան մարդ է, ինչ հանգամանք ունի արդեօք, ասոնք չի փնտռեր . որին ըլլայ նէ՝ սրտանց գործը կը տեսնայ :

7. Իր բանին ելլալիքին համար մարդավար եղողը՝ սնասպարձ, ինքնահաւան ու անձնասէր կըլլայ, մէկը սիրէ, յարգէ կամ անոր երախտիք մը ընէ նէ, իր օգտին համար է մինակ, բարեկամութիւն խոստանալները, ցուցուցած փոյթերը, (խնամիչ ըլլալները) ըրած մեծարանքները հա՛ խըղբայցօղ մօմէ շինված արձանի մը վըայ տեսեր ես, հա՛ աս մարդուն վըայ :

8. Իրաւ որ պէտք չէ՛ աս վերինին պէս մարդավար մարդուն նմանելու ջանալ, բայց աս ալ կայ որ՝ ա՛նանկ մարդու երեսէն այնչափ վտանգ չի տեսնըվիր, այնչափ չի զգուիր մարդ՝ որչափ մէկ բիրտ՝ կոշտ ու

աղտեղի տղի մը երեսէն :

9. Արեւելի հեղինակին մէկը կրտսէ քի, աս լուսաւորեալ դարիս մէջը անբաղարարութեան պակասութիւնը ունեցողը մէկ ուրիշ պարծենալու մեծ հանձար մը (հիւնէր մը) պիտի ունենայ՝ որ դայ ան պակասութիւնը ծածկէ : Այս մարդավարութիւնը մէկին կամքին մինակ յանձնուիլ մըն է . շատ բնական ձիրքերուն տեղը կը բռնէ . հարուստը ու աղքատը պատուոյ տէր ընող՝ ծերը ու երիտասարդը միօրինակ գեղեցիկ երեւցընող կատարելութիւնը տղայոց վրայ տեսնալէն մարդ շատ կախորժի :

Ինտոր քունէն ելլալու է աւտովանցները , ինտոր աղօթք ընելու է , մաքրութեան համար ինչ հոգ պէտք է տանիլ , պառկելու ասեն ինչ պարտք կայ կատարելու :

1. () Ըրվան ամմէն մէկ վայրկեանին մէյմէկ պարտք կը դնէ մեղի քաղաքավարութիւնը , անկողինէն ելլելուս բռնէ տէ՛ ամմէն գործքերնիս քաղաքավարութեամբ պիտի ըլլայ :

2. Տղայ մը դեռ անկողինէն չելած իր սիրտը աստուծոյ պիտի նուիրէ , ու աստուծոյ պիտի աղաչէ քի շնորհքը իր վրայէն բոլոր օրը անպակաս ընէ որ՝ ի ընէն գրված պարտքերը տեղն ՚ի տեղը կատարէ , ու աւելի յօժարութեամբ գործել ուզած պակասութիւններէն ետ մնայ , ահա՛ աս է մէկ տղին առաջին պարտքը՝ անկողինէն դեռ չելած :

3. Աս ծառայութեան ու շնորհակալութեան առաջին հարկը աստուծոյ վճարելէն ետքը , շուտ մը ան

կողինէն պիտի ելլայ ու որչափ որ հնար է նէ՝ վայելչ  
չու թեամբ հազվի: Ասպիբով կենալը, կուրծքը՝ սը-  
բունքները ու ուրիշ գոց պահելու տեղվանքները  
բաց թողցնելը, գուրպաններուն կասկիչները մարդու  
սուղեւ կասելը անշնորհք բան է. մանաւանդ աղջիկ  
ները զգոյշ պիտի կենան աս պակասութիւնները չը-  
գործելու, վասն զի անոնց՝ տղաքներէն աւելի ամօթ է:

4. Արեւտ՝ աչքդ՝ բերանդ՝ ձեռքդ զանց մի՛ առներ  
լուսն, ականջներդ՝ առ զաներդ մաքրէ՛, մազերդ սանտ-  
րէ՛, եղունգներդ կտրէ՛, լաթերդ փոշիտտ (թողտտ) մի՛  
ձգեր. նայէ՛ որ հազածներուդ վրայ պատուած, քա-  
կուք, բիծ չըլլա՛. գուրպաներդ վար չխնս՛. ու ոտքիդ  
ամաններն ալ մաքուր ըլլա՛, վերջապէս անանկ հազվէ՛  
որ քեզ տեսնողները աս տղին վաբբը աղէկ պիտի ը-  
լա ըսեն:

5. Հոս պատուիրած բաներէս աւելի առողջու-  
թեան օգուտ բան չըլլար, օր մը աս պատուիրած բա-  
ներս տղայ մը զանց առնէ նէ, ան տղայէն ամեն  
մարդ կը գանի, ու անոր ասանկ անշնորհք հազվիլը  
տեսնողը կըսկըսէ գէշ կարծիքներ ալ ընել անոր վրայ,  
աս բանը ան տղին ծուլութեանը կամ ուրիշ արտա-  
քին կամ ներքին պակասութիւններուն կուտայ:

6. Հազվելուդ պէս կայնէ՛, ձեռքդ բարեւ բռնած  
ու անիտի մտքով աղօթքդ ըրէ՛, թէ՛ քու թէ՛ ճնողք-  
ներուդ հոգւոյ փրկութեանը՝ մարմնոյ պիտոյքնե-  
րուն հարկաւոր եղած շնորհքը խնդրէ աստուծմէ:

7. Աղօթքդ ընցունելուդ պէս գնս՛ հօրդ մօրդ  
ձեռքը սրագ, և ինչ որ քեզի պատուիրել կուզեն նէ՛  
աղէկ մտիկ ըրէ, ու պատուիրածնին քեզի թեթեւ  
ալ երեւայ, ծանր ալ երեւայ մտադրութեամբ կա-  
տարէ:

8. Պատկերու ատենը գալու ըլլա նէ՝ ճնօղքներէդ հրաման չառած մի՛ քաշվիր երթար քովերնուն, առտորվանին պէս աղօթք ըրէ՛, վայելուչովը հանովէ՛, լաթերդ ալ մաքրէ՛ ծայլէ՛ ու տեղը դիր ։

9. Ետքը աջ կողմիդ վրայ պառկէ՛, չըլլա՛ որ երեսիդ կամ կունակիդ վրայ պառկիս, առողջութեան վընաս է, ու սկսէ՛ ցորեկվան բոլոր ըրածներդ մտմտալ ։

10. Մէկ գէշ բան մը գործեր ես նէ՛ աստուծմէ՛ ուղիղ սրտով թողութիւն խնդրէ, ու խօսք տուր աստուծոյ՝ որ մէյմնալ անանկ ամէնալու գործ չի գործես ։

Եկեղեցին ինչպէս կայնելու է ։

1. Աստուծոյ խօսքերը իրեն պաշտօնեայներուն բերնէն լսելու համար սուրբ տեղ մըն է Եկեղեցին, հոն Յիսուս Քրիստոս քեզի կրպասէ՛ որ երթաս պէտք եղած յարգդ պատիւդ անոր վճարես. եկեղեցին պիտի մոնաս մի միայն քեզի դրված պարսպերը կատարելու համար ։

2. Թէպէտ ամեն տեղ աստուծոյ առջեւն ես տէյի կը սեպրիս, բայց առաւել եկեղեցին մէջը, ու բեմնան տեղ ինչպտար պարկեշտութեամբ կենաս նէ՛ քիչ է ։

Ղլուխդ առջեւդ ծռէ՛, խելքդ բոլորտիքդ անցած բաներուն մի՛ տար ։

3. Պատարագին կամ ուրիշ եկեղեցական հանդէսի մը գըտնըվիս նէ՛ կամաց գրուցէ աղօթքդ որ քովի կայ նողդ իրեն աղօթքը չսխալի. չըլլա՛ որ լեզուիդ ինաս խօրաթես, կամ աղօթքէդ եվէլ ուրիշ բանի մը խելքդ սուեր ես տէյի դուն քեզ ցուցունես, ասով

ուրիշին տուած դայթակղութիւնդ աններելի է :

4. Քարոզի ժամանակ ուշադրութեամբ մտիկ ըրէ՛, որ քարոզիչին ըսածներէն բան մը չի փախցունես ու ան՝ որ երկրիս վրայ աստուծոյ փոխանորդ ըլլալով քեզի ինչ որ կը պատուիրէ կոր նէ կատարես :

5. Ամէն եկեղեցի երթալուդ տաճարին վրայի խաչը մէյ մը համբուրէ, ու վայելուչ կերպով մը երեսդ խաչակնքելէդ ետքը՝ ներս մտի՛ր :

6. Քրիստոնէական վարդապետութիւնը դաս առած ատենդ մեր սուրբ կրօնքին ինչխտար վերաբերեալ բաներ կայ նէ՛ սորվէ՛ :

Մեր մերձաւորին ինչ պարտաւորութիւն ունինք :

1. Մերձաւոր ըսելով՝ կիմանանք առ հասարակ ամէն մարդ, այսինքն՝ մեզմէ վերերը, մեզի հաւասար ները ու մեզմէ վարերը, աստուծոյ առջեւը ամէն մարդ մէկ է, անոր համար աստուծոյ հաճելի ըլլալ կուզեմք նէ պէտք է որ անոնք անխտիր սիրենք ու անոնց օգնենք, ինչպէս աս աւետարանական առածը մեզի կը սորվեցընէ “ Արպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասցիք և դուք նոցա ” :

2. Աստուծոյ պատուիրանքներուն մէկն ալ աս է քի՛ մեր մերձաւորը մեր իսկ անձին պէս սիրենք . կրնայ մի մէկ մարդ մը իր նմաններուն ունեցած պարտքը չի կատարել . . . ներէ՛ ուրիշին պակասութիւնը, վասն զի շատ ատեն ալ դուն՝ ուրիշին քեզի ներելուն կարօտ կրլաս :

3. Չափազանց գինի կամ ուրիշ ոգելից ( ուուհի



տայիր) բաներ խմելով խելքը գլխէն գացած խաչ տառակ տեսարան մը եղող մարդուն վրայ խնդացող անկիրթ տղաքներուն մի նմանիր. հասա՛ աս ալ ինծի պէս մարդ է տէ, հիմա անասուններուն կարգն է մտեր ըսելով՝ մեղքըջիր անիկա :

4. Սի խնդար մերձաւորիդ ան պակասութիւններուն վրայ որ շտկելը իր ձեռքը չէ՛, միտքդ բե՛րքի շատ տգեղ, կաղ, սապատող (խամպուռ) մարդիկ արտաքին պակասութիւններնուն տեղը ներքին կատարելութիւններ ունին :

5. Ատոր համար է որ գեղեցիկ երիտասարդներուն ու աղջիկներուն շատր անխելք հպարտ ըլլալնուն ու գէշ վարք ունենալնուն համար մարդ չի կրնար անոնք քաշել տէ՛ շատ ատեն սեպէ՛քի կերթայ բնութեանը պակասաւոր ստեղծած մարդիկը կը փնտռէ :

6. Չըլլս՛ որ մէկին խօրաթվածքը կամ շարժուածքը խաղը առնես, վասն զի ծաղը ըրած մարդդ իմանալու ըլլայ նէ՛ այնչափ կը ցաւի որ՝ անոր նախատական (ըռզի դպչելու) խօսքեր ընէիր նէ այնչափ չէր ցաւեր :

7. Մերձաւորիդ օգնէ՛, գլխուն գէշութիւն մը եկած ատենը ցաւակից եղեր անոր, մխիթարէ՛ անիկա որ օրհնենք առնես :

8. Աղքատի մը ողորմութիւն տալու ատենդ սրդողելով մի՛ տար, որ աղքատն ալ քեզմէ ողորմութիւն ուզելուն չի զղջա՛. ձախորդութեան գալով կամ տկարութեան պատճառաւ մարդու ձեռք բանալու երեսը դիմացնող մարդը գիտես ինտոր պիտի մեղքընանք :



Ճնողքներնու՝ վարժապետներնուս ու բոլոր մեծամեծ մարդիկնե-  
րուն ի՛նչ պարտաւորութիւն ունինք :

1. Բեզմէ մեծը պատուէ՛, պատուէ՛ վարժապետդ ,  
հնազանդ ու երախտագէտ եղի՛ր անոր , սէր ունեցի՛ր  
վրան , ասանկ ալ հօրդ մօրդ ու բարերարներուդ , և  
դի՛ր անոնց սիրուն քու անձդ :

2. Աշխարհքիս մէջը հայրդ մայրդ աստուծոյ փոխա-  
նորդ են . քեզի , մանկու թիւնդ կը խնամեն , քեզի կրը  
թեւը կը ջանան , ու անդ ադ ար կաշխատին որ կեանքդ  
երջանկու թեամբ ու քիչ աշխատանքով վարես աշ-  
խարհքիս մէջը :

3. Ա՛նոնց հնազանդ երեւնալու համար ինչ որ քե-  
զի կը պատուիրեն նէ շուտով կատարէ , թէ որ տրտըն  
ջաս կամ պատուիրած բաներնին չընես նէ՛ կը մեղան  
չես . անոնց սիրտը կը կոտրես , պարտքդ չի ճանչցած  
կրլաս՝ ու քու շահիդ ալ վնաս կը բերես :

4. Օ՛նողքներուդ ի՛նչ պարտք ունիս նէ կատարե-  
լով , խոնարհութեամբ անոնց հետ խօսելով , քանի որ  
դուրսէն կուգաս նէ՛ ձեռքերնին պագնելով՝ պատուէ՛  
անոնք , պակասութիւններնին ծածկէ՛ , մի՛ ըսեր , մա-  
նաւանդ անոնց պակասութիւն մի՛ գտնար , վասն զի  
աստուած ըսաւ քի՛՝ « Պատուեա՛ գհայր քո և զմայր » :

5. Երախտագիտութիւնդ՝ սէրդ ու բարեկամու-  
թիւնդ անոնց ցուցունելու համար՝ հիւանդ ըլլան նէ՛  
կրցածիդ ջափ հո՛գ տար անոնց վրայ , երբ որ ծերու-  
թեան կամ ուրիշ վիճակի մը մէջ գտնվելով օգնու-  
թեան կարօտ կրլան նէ՛ գործքերնին տես , ու որչափ  
քեզի ձեռք կրնայ տար նէ՛ անոնց պիտոյքը հոգա՛ :

6. Ի՛նաւորութեանդ գէշութիւնը ու կրթութեա-

նրդ թերութիւնը ցուցուցած կրլլաս, երբոր ծնողքը, վարժապետդ, մեծդ քեզի բան մը կը հարցունէ տէ անշնորհք պատասխան կուտաս. յանցանք ունիս նէ՛ ընէ՛ մէյմնալ մի՛ դործեր ան յանցանքը. իրաւունք ունիս տէյի քեզի կերեւայ նէ, պարկեշտութեամբ արդարացուր դուն քեզ՝ ետքը լուռ առջեւդ նայի՛ :

7. Տղայոց դասատու տէյի դրված մարդը անշուշտ յաջողակ՝ առաքինի ու ընտրեալ մարդ է, անոր համար անոր քու վրադ ունեցած խնամքը՝ աշխատութիւնը քիչ բանով չէ՛ս կրնար փոխարինել :

8. Թէ ազնուականութենէդ թէ բարեբաղդութենէդ աշխարհքիս մէջը ի՛նչ մեծ աստիճանի կը հասնիս նէ՛ հասիր. միտքէդ մի՛ հաներ քի՛ հօրմէդ մօրմէդ ետքը քու ուսուցիչդ աւելի պիտի մեծարես ու անոր երախտագէտ պիտի ըլլաս տէյի :

9. Ի՛նչ որ քեզի կը պատուիրեն նէ՛ շտկէ շիտակ կատարէ, պատիժ մը տան նէ՛ տրտունջ չընելով կրէ՛, ու շաղրութեամբ խրատնին մտիկ ըրէ՛, տուած դասերնուն օգուտ քաղէ, ու ի՛ր պակասութիւններուդ համար մըներ տէյի քեզի կը սրբդողին նէ՛ նայի՛ որ շտկես ան պակասութիւններդ :

Կարգաւորները ծերերը ու բոլոր պատուաւոր մարդիկը ինասր պատուելու է :

1. Կարգաւորները պատուէ՛ անոնք պատուելովդ աստուած պատուած կրլլաս, վասն զի՛ աստուծոյ սպասաւորները ու փոխանորդներն են, ու իրենց պաշտօնին պատճառաւը աստուծոյ առաւել մերձաւոր կը

սեպիլին :

2. Չրսած կերեւայ որ՝ ծերութիւնը մէկ պատկառելի բան մըն է, անոր համար տղաքները ինչխտար ծերը պատուեն նէ՝ քիչ է. ամմէն ատեն՝ էն մեծ պատիւը ծերերուն ընելու է, ամմէն հնարաւոր գործքերնին տեսնալու է, անոնց ծերութեան պակասութիւններուն սիրով համբերելու է, մանաւանդ վրանին ամենեւին խնդալու չէ :

3. Վողալով միշտ մտածէ որ՝ օր մըն ալ դուն պիտի ծերանաս, հայրդ՝ մայրդ ծերացեր են, աս մտածելով դուն ծերերը մի՛ ծաղրեր, որ ուրիշ աներես տղաքներ ալ քու հայրդ՝ մայրդ չի ծաղրեն, ու քու ատենիդ տղաքներն ալ քեզ չի ծաղրեն :

4. Ո՛վ որ տարիքով իրմէ մեծ մարդուն առջեւը պարկեշտութեամբ ու ակնածութեամբ չի շարժիր նէ՛ իրեն անկիրթ մնալը կը ցուցունէ. յարգոյ ծերին երեսն իվեր ծաղրող անղգամին քովը մի՛ կենար, փախիր. վասն զի՛ անանկ տղան բիրտ է՝ ու երեսին ջուրը փախած է :

5. Տարիքով կամ պատուով քեզմէ վեր մարդ մը քու գանձված տեղդ կուգայ նէ՛ ոտքի վրայ ելիր. մինչեւ որ հրաման չի տար նէ՛ մի՛ նստիր. բան մը հարցունէ նէ՛ խոնարհութիւն ըրէ անոր՝ ետքը պարկեշտութեամբ պատասխան տուր :

6. Վարդավարութիւնը մարդուս մէկ ստացուածք (վարկեթ) մըն է տէյի գիտցիր, ինչխտար որ անիկա աղէկ բռնես նէ՛ անխտար շահ կը տեսնես անկէ :

7. Հետը մարդավարութեամբ վարված մարդդ՝ իրեն ըրած պատիւներուդ արժանաւորութիւն ունեցեր չէ՛ ունեցեր՝ հոգ չէ. որովհետեւ բարեկիրթ մեծնալուդ դուն ուրիշ կերպ չէիր կրնար վարվիլ ա.

նոր հետ . գիտցիր որ միշտ օգուտ կը տեսնաս ասանկ  
 գովելի վարմունքներէդ . ասոր համար մէկ մարդ մը  
 թէ՛ սոսկ մարդոց հետ, թէ՛ երեւելի մարդոց հետ որ  
 չափ առաւել յարգանօք կը կենայ նէ՛ այնչափ իր ու  
 նեցած արնիւ հանդամանացը յարգը կեւելցունէ :

Կերակուրի ժամանակ սեղանի վրայ ինչպէս շարժելու է :

1. Սեղանին նս՛ կողմը նստէ ալ ըսեն նէ՛ դուն մի՛  
 նստիր, համբերէ՛ որ մէկալ սեղանակիցները ինտոր  
 պիտի նստին նէ՛ դուն ալ տեսնաս տէ անանկ նստիս .  
 ու անձեռոցքդ (բէշկիրդ) բանալու մի՛ արտորար :

2. Կերակուրի շսկած հայրմերդ ըսէ՛, կերակուրէն  
 ելլալու ատենդ ալ, չելած՝ հայրմերմն ալ ըսէ՛, փառք  
 տո՛ւր աստուծոյ՝ անանկ սեղանէն ելիր . բայց աս  
 պարտքդ ցած ձայնով կատարէ որ մեկայներուն ալ  
 ղօթքը չի խափանես և ամմէ՛նը քեզի չի նային :

3. Սեղանէն նէ՛ խիստ շատ հեռու նստէ, նէ՛ խիստ  
 շատ մօտ . շիտակ կեցիր աթոռիդ վրայ . արմունկդ  
 (տիրսէկդ) սեղանին վրայ մի՛ հեծցներ, մի՛ միայն  
 դաստակդ (պիլէկդ) սեղանին վրայ դիր . կերակուր  
 կերած ատենդ անվայելուչ շարժմունքներ մի՛ ըներ :

4. Դանակդ, պատառաքաղդ, դգալդ, բխաթադ  
 ալ կողմդ դիր, հացդ ձախ կողմդ . բաժակդ (խատէ  
 խըդ) ալ ալ ձեռքիդ դիմացը . երբոր դգալդ՝ ալ պէտ  
 քը չէ՛ նէ բխաթայով ետ տո՛ւր :

5. Դանակդ միշտ ձեռքդ մի՛ բռներ, բան մը կտրե  
 լէ՛դ ետքը սեղանին սփռոցին վրայ դիր, մէյ մըն ալ  
 նորէն պէտք ըլլա նէ ձեռքդ առ :

6. Այլ դանակին ծարովը ան, ետքը ծարը սրբէ . քեզի մտեղեն կամ ընդեղեն ( զահրէտով ) կերակուր մը կամ սէր ( խայմախ ) կամ ուրիշ հեղուկ ( սուլու ) բան մը տալու ըլլան նէ՝ աջ ձեռքովդ տուածնին ան, ձախ ձեռքովդ ալ առջեւի բխածագ տուր . հաւկիթ , սըր , տուղ կամ ինչ չոր բան առնելու ըլլաս նէ՝ ձեռքովդ ան :

7. Կերած բանիդ փուշերը , ոսկորները , ու ինչ որ չի ուտուիր ու չեն ուղեր ուտել նէ , բխածայիդ մէջը մէկ քովը դիր , կերած պտուղիդ կուտերը մատիդ ծարովը բերնէդ ան , չըլլա՛ որ ձեռքիդ կամ բխածայիդ մէջը թուքնելու պէս բերնէդ հանես նետես :

8. Չըլլա՛ որ բխածագ բերանդ առնես տէ մէջի միտի ջուրը խրմես , պիտի խրմես նէ՝ դգալովդ խրմէ . թանդ ( չորպագ ) շատ տաք է նէ բերանովդ չի փրչես . դգալովդ կամաց կամաց խառնէ՝ որ պաղի . ուրիշ կերակուրներն ալ մի՛ փչեր պաղի տէյի :

9. Միտին կամ կերակուրին ջուրը թապախին կամ բխածային մէջէն դգալիդ մէջը մի՛ կորզեր տակը կաթիլ մըն ալ չի թողցունելու մտքով . բխածագ ալ հացով մի՛ սրբեր , ու դգալիդ չեկած բանը բխածայիդ մէջը թողցուր :

10. Հացդ մի՛ խաճներ , սեղանին սիւռոցին վրայ ալ մի՛ կտրեր , ինչևստար որ պէտք է նէ այնչափ փրցուր ամմէն մէկ անգամին , խնձորն ալ տանձն ալ մի՛ խաճներ՝ դանակով կտրէ , կերած ատենդ ալ դանակը ձեռքէդ վար դիր :

11. Աղանի վրայ սպասաւորութիւն ընելու պէտք ըլլայ քեզի նէ՝ մէկը քեզմէ հաց ուղէ նէ բխածայի մէջ դիր , անանկ տո՛ւր , ձեռքով մի՛ տար . խրմելու բան մըն ալ ուղեն նէ՝ նոյնպէս բաժակը ( խատխը )

բիաթայի մէջ դիր, անանկ տուր, ուղող մարդը բա-  
ժակը ձեռքը առնելուն պէս բիաթան մէկ դիւն,  
դանակը, պատառաքաղը, դգալը մէկուն տասնէ կո-  
թը անոր դարձուր:

12. Ի՛ խաթաները փոխող մարդը միշտ պիտի նայի որ  
սեղանակիցներուն մէջէն էն մեծը ո՞վ է նէ՛ անկէց ըս-  
կրսէ փոխել, ու ետքը սեղանին բոլորտիքը պտըտելով  
պէտք եղողինը պիտի փոխէ խտրութիւն չընելով:

Ուրիշ ի՛նչ բան պէտք է նայելու սեղանին վայ:

1. Նէ՛ խիստ արտորնօք կէր, նէ՛ խիստ ծանր, մէկ  
պատառդ վար չի գացած մէկալը բերանդ մի՛ դներ,  
նայէ՛ որ շրթունքներուդ ծամելիքներուդ ձայնը չել-  
լս, դգալիդ ու պատառաքաղիդ վրայ բերանդ ինչը-  
տար բան կրնաս դներ նէ՛ այնչափ բան առ:

2. Ուրիշէն առաջ քեզի բան տան տէյի բիաթադ  
երկնցունելդ, քովի նստողիդ բիաթային մէջ ի՛նչ կայ  
տէյի նայելդ, տուած բաներնին հոտվտալդ, ադ կը-  
տորը չեմ ուղեր նա՛ կտորը կուզեմ ըսելդ մեծ անվայե-  
լուչ բան է, բայց ո՞ր կտորը կուզես տէյի քեզի ստի-  
պեն նէ, ան ատենը ուղած կըտորդ առնես նէ՛ զէն  
չունի:

3. Երբոր հաւեղէն կամ ուրիշ կտրտած կերակուր  
մը կը բերեն թապախտով առջեւդ նէ՛ որկրամոլ մաը  
դոց պէս կակուղ կամ խոշոր կտորները մի՛ զատեր:

4. Ձեռքիդ պատառաքաղով սեղանին մէջ տեղի  
կեցած թապախէն բան առնելը, մատվներդ, պա-  
տառաքաղդ, դանակիդ լըլը, մարդու սիրտ դանե-

ցրնելք բաներ ընելը, ասոնք ամենն ալ մեծ անբաղաբաւարութեան նշաններ են :

5. Ի՛նչ կերած ասոնդ՝ բերանդ շատ մի՛ բանար, որ ծամածոց մարդ չի տեսնու, բիւթային մէջի եղած բանին վրայ մաղ մը, ժժմուկ մը, կամ մէկ գանեղութեան մը ըլլայ նէ, դգուշութեամբ սու, վերցուր անկէ կայ ու դիր բիւթայիդ մէջը մէկ քովը՝ որ մարդ չի տեսնայ տէ՛ ան ալ քեզի հետ գանի :

6. Պատահաբար բերանդ բան մը դրիր տէ՛ նայեցար որ քեզի գէշ կընէ կոր, բէշկերովդ բերանդ ծածկէ՛ անանկ բերնէդ հանէ՛ ան բանը՝ ու բիւթայիդ մէջը դիր, որ մարդ չի տեսնա :

7. Թէ՛ բիւթային մէջը՝ թէ՛ սեղանին մէջ տեղը դրված թապախին մէջը բան մը կտրելու ըլլաս նէ, նայէ՛ որ նէ քովններուդ վրայ կերակուրի ջուր ցաթկեցունես՝ նէ քու վրայ :

8. Աղաներդ դանակովդ կամ սառտաքաղովդ մի՛ խառներ. ոսկորին մէջի ուղեղը (իլիկը) հանելու համար բիւթայիդ վրայ մի՛ զարներ, առդայով կուտ մի՛ կտորեր, ու նայէ՛ որ բերանդ լեցուն իբէ՛ն չի խօրաթես :

9. Կերակուրը սանկ է եղեր՝ նանկ է եղեր տէ՛յի բան մը մի՛ ըսեր, թէ՛ որ ինտոս է եղեր կերակուրը տէ՛յի քեզի հարցունեն նէ՛ նայէ՛ որ ինչխտար կընաս նէ գովես :

10. Նայե՛քի՛ սր կերակուրէն աւելի կախորժիմ՝ սր կերակուրէն չէ՛ս ակտորժիր չիմացունես : Օրինակի համար՝ մի՛ ըսեր ես կովի միս չեմ ուտեր, ես խողի ապուխտի (սասարմայի) հոտ չեմ կընար առներ, քատուլեան ինձի կը դպչի, խորոված միսը (քէպապը) կը սիրեմ, հաւեղէն կերակուրէն աւելի կախորժիմ քան թէ ոչխարի մսէն :

11. Թէ՛ որ կերակուրէ մը ամենեւին չէ՛ս ակտորժիր



նէ, նայէ՛ որ չախորժելիք մարդու չի զրուցես. ան կերակուրէն . բեղի կտոր մը կուտան նէ՛ դէր բխաթայիդ մէջը թող կենայ մինչեւ որ մէկ ուրիշ կերակուր մը բերեն նէ :

12. Թան (ջորպա) կերած ատենդ խմելք մի՛ ուղեր, սպասէ՛ որ մէկ ուրիշ բան մըն ալ ուտես, խմելէդ առաջ անձեռոցքովդ ( փէշկիրովդ ) շթուկքդ ու մատերդ սրբէ՛, բերանդ բան կայ իքէն մի՛ խմեր, խմելք բանիդ վրայ շատ բարակ բարակ մի՛ նայիր, մի՛ մէյմը խրմեր մէյմը կայնիր, մէկ բերանդ առնելուդ՝ որչափ պիտի խմես նէ՛ խմէ՛ :

13. Խմած ատենդ աչքդ ասդին անդին մի՛ ըներ, բաժակը ձեռքդ մի՛ խօրաթեր, խմելէդ ետքը մի՛ հեվար ու նորէն բերանդ սրբէ՛ :

14. Թէպէտ հիմայ շատ սովորութիւն չէ՛ մէկուն կենացը համար գինի խմել, բայց թէ որ մէկը քու կենացդ համար գինի խմէ նէ՛ գլուխդ պարկեշտութեամբ ծռելով շնորհակալ եղիր անոր, սեղանակիցներուն մէկին կենացը համար խմեն նէ՛ անոր մէկ խոնարհութիւն մը ըրէ, ետքը քու գինիդ խմէ, տղաքներուն չի վայլեր մարդու կենացը համար գինի խմել, աս բանը մինակ սեղանը գտնելով մեծերուն կրվայլէ :

15. Ըմմէն բանէն ելել չըլլա՛ որ որկրամոլ տղաքներուն պէս շեքէրեղէն կամ ուրիշ ասոնց պէս բաներ կամ սրտուղ սեղանէն ձեռքդ առնես ելլաս կամ գրը պանդ ( ճէպդ ) դնես :



Դաս առնելու ժամանակը կամ դպրատան մէջը ինտոր պէտք է կե-  
նայ, և տղաքները մէկգլմկու ի՛նչ պատիւ պիտի ընեն :

1. Ս արժապետին ի՛նչ պատիւ, ի՛նչ յարգութիւն,  
ի՛նչ երախտագիտութիւն պիտի ցուցունես նէ, վերը  
ըսի հերիք է :

2. Քեզի դասին ատենը կամ դպրատան մէջը ի՛նչ  
տեղ կը ցուցունեն նէ, հոն նստե՛լ, խօսքի բռնելով,  
մըշտելով, հրելով, որ և իցէ կերպով ընկերիդ նեղու-  
թիւն տալով մի՛ անհանգիստ ըներ անիկա :

3. Թէ որ ընկերիդ դարնես, կամ անոր մէկ պղտիկ  
չարութիւն մը ընես նէ՝ անողամ ըլլալդ ամմներ կը  
մանան, վարժապետդ ալ հասկընալուն պէս քեզ կը  
պատժէ :

4. Պէտք ըլլա նէ ընկերներուդ պղտիկ պղտիկ բա-  
րերարութիւններ ըրէ, պակասութիւն մը կարելի է որ  
դործեն նէ՝ քու կամօքդ մի՛ ելթար վարժապետին ի-  
մացուներ, ընկերներուդ մէկը սուտ տեղը վրադ յան-  
ցանք մը կը ձգէ նէ՝ մի՛ բարկանալով արդարացուներ  
դունքեզ, ուսն ընկերիդ դէմսի մի՛ պահեր ներսիդ իդ :

5. Իտօրնկերիդ ու ընկերներուդ հետ ալ անուշու-  
թեամբ ու մարդավարութեամբ վարմէ, միշտ քաղց-  
րաբարոյ եղի՛ր, կռիւէն փախի՛ր, ու ընկերութիւն  
ըրած տղաքներուդ հետ նայէ՛ որ միշտ միաբանու-  
թիւն ընես :

6. Սերիշին համար ներողամիտ եղի՛ր, բայց քեզի հա-  
մար մի՛ ըլլար ներողամիտ, հապա խիտ ( սերթ ) եղիւր .  
միտքդ բեր քի մենք շատ հեղ մեր կռնակը գերան  
կայ տէյի մտքերնուս անգամ չենք անցուներ տէ՛ կեր-  
թանք մեր եղբօրը աչքին մէջի շիւղը կը տեսնանք .

ան կտորին վրայ Ազրովետը աղէկ կը գրէ : “ Մարգ.ս.քու վինէն դժգոհ է՝ բայց իրմէ շատ գոհ է , ուրիշին պահասութիւնը չորս աչքով կը նայի , իրենին գայ նէ կը կուրանայ , ախոս՝ ասանկ է եկեր մարդս՝ ասանկ կերթայ ” :

7. Արժասպետդ ընկերիդ սրթողած ատենը կամ անոր պատիժ տալն իբէն ուրախանալդ հասկցիլն է՝ գէշ տղայ է կրտսն քեզի համար , անկէ իզատ կը մեղանչես աստուծոյ . վասն զի քրիստոնէից ընկերսիրութիւն կը վայելէ :

8. Ի՞նչ կերպով կարգալ գրել պէտք է քեզի , ի՞նչ բանով կրթութիւնդ կատարելագործելու ես , ասոնք ինձի չլինար քեզի ըսել , հասպա՝ միայն վարժասպետդ տարիքիդ կը նայի , խելքիդ կարողութեանը կը նայի , դիւրին յառաջ կերթաս կոր մի , ի՞նչխտար բան գիտես՝ ան կը նայի , անկէ ետքը սորվելիք բանըդ ի՞նչ ճամբով պիտի սորվեցունէ՝ նէ՝ ան պիտի որոշէ . քու պարտքդ մինակ անիկա է քի , անոր մօտիկ ընես , ու ամիէն կողմանէ անոր հնազանդիս :

Ի՞նչ խաղ խաղալու է՝ ու ինչո՞ւ խաղալու է :

1. Երբոր խաղ մը կը խաղաս նէ՝ մի՛ ոտք կոխեր քի ուզած խաղը խաղան ընկերներդ . ինտո՞ր պիտի ընես քի ընկերներդ քեզի հետ տեսութիւն ընել ուզեն տէյի՝ պզտիկութենէ՝ նայէ՛ որ սորվիս :

2. Խաղացած ատենդ մէկը քեզ ցաւցունէ՝ նէ՝ մի՛ բարկանալով գանգատ ըներ , որ ցաւցունողը քեզի շնորհապարտ մնայ , ու ընկերներդ ալ քեզ աւելի սիրեն :

3. Աշխատանքի ու ճարտարութեան վերաբերեալ խաղերը խելք հոգնեցունելու խաղերէն աղէկ են :

4. Իայց կամ օգին գէշութենէն կամ ձմեռ ըլլալուն և կամ կամք չի կոտրելու համար ուրիշ խաղեր հարկ կրըայ խաղալու նէ՝ չըլն որ նարտի (խումարի) վերաբերեալ խաղեր խաղաս :

5. Խաղացած ատենդ յաղթեմ տէյի մի՛ ինքըղինքդ չափազանց հոգնեցունելու . յաղթես ալ նէ՝ յաղթըվիս ալ նէ մի՛ ինքըղինքդ փոխեր . խաղ ըսածդ փարայ վատորկելու համար հնարված չէ՛ , հապա կարդալէդ կամ աշխատութենէդ հոգնութիւն առնելու համար հնարված է :

Խաղին մէջ բանդ յաջող կերթայ կոր նէ՝ մի՛ մեծ մեծ խօսիր ուրիշները ծաղը ընելու պէս :

6. Կրթութեան (իթմանի) վերաբերեալ խաղերուն մէջը մեծ զգուշութեամբ շարժէ , որ քեզի հետ խաղացողներուն վնաս մը չի տաս :

Թէ՛ իր սունը թէ՛ ուրիշին սունը ընկերակցութեան (մէճլիսի) մէջ գտնվողը որ բանը ընելու է որ բանը ընելու չէ :

1. Իմաստունին մէկը կըսէ .քի՛ ջանս՝ որ անուշ լեզու խնտում երես , ու համբերող ըլլաս . բարեկամներուդ տունը երթաս նէ՛ հոն խօսք խօրաթա չի հաննս . հապա ուրախութիւն բերես անոնց որ՝ ամմէն մարդ .քեզի հետ տեսութիւն ընել ուղէ :

2. Գստիկոնի մը ( տայրէի մը ) առջեւ երթաս տէ՛ դուռը գոց գտնաս նէ , կամացուկ մը դնրկ դուռը , մինչեւ որ ներսէն ձայն չի հաննէն նէ՛ մի՛ բանար դու

ուր . ներս մտնաս նէ՛ դուռը գոցէ՛ որ ուրիշին հարկ  
չըլլա՛ գոցելու , քեզի սլ աս ի՛նչ անկիրթ տղայ է չըսեն  
մաքովինն , դուռը առուր մի՛ գոցեր բանար , մանա  
ւանդ՝ սենեակին մէջը քեզմէ վեր մարդ ըլլայ նէ :

3. Ո՛ւր տեղ կամ ի՛նչ պատճառաւ կըլլայ նէ ըլլա ,  
չվայրած ատենը իրարու վրայ ( թէմէլահներ ) ընելով  
վրադ խնդացնել մի՛ տար :

4. Քեզմէ վեր մարդ մը քովէդ կանցնի նէ՛ անոր  
ճամբայ տալու համար քիչ մը ետեւօք քաշվէ՛ , դուռ  
նէ մը ներս մտնալու ատենդ է նէ՛ կայնէ՛ որ առաջ  
ան մտնա՛ , սանդուխի մը վրայ կը գտնովիս նէ կայնէ՛ որ  
պատին կողմէն ան ելլա՛ կամ իջնա՛ :

5. Մ՛նկերակցութեան ( մէծխտի ) մէջ գտնված ա  
տենդ մարդու մը առջեւէ անցնիս պիտի նէ՛ առաջ ա  
նոր դարձիր , գլխով խոնարհութիւն մը ըրէ՛ , ետքը  
անցիր , բան մը տալու առնելու ըլլաս նէ՛ քաղաքավա  
րութիւնը ան է որ , ձեռքէդ ձեռնոցներդ ( էլտիվէն  
ներդ ) հանես , անանկ տաս առնես , մէկը քեզի բան  
մը պատմելու ըլլայ նէ՛ ասդին անդին չի նայելով լուռ  
անոր պիտի մտիկ ընես :

6. Տղայ մը իրմէ մեծ մարդուն բարեւ տուած ա  
տենը ընտանեբար ( թէքլիֆսիզէ ) անոր ձեռքը չի  
պիտի բռնէ . իրմէ վերին առջեւէն ձեռքը երկնցու  
նելով բան չի պիտի տայ առնէ :

7. Տեղ մը մտնաս նէ առաջ բարեւ տուր , ետքը  
ան տեղի մարդիկը նստեր են նէ՛ դուն ալ նստէ՛ , կայ  
ներ են նէ՛ դուն ալ կայնէ :

8. Նստիս նէ՛ նստած տեղդ մի՛ փովիր , անքերդ մի՛  
լարեր , մի՛ երթար դար , շիտակ նստէ :

9. Մ՛նկերակցութեան ( մէծխտի ) մէջ գտնվող մար  
դոց բոլորտիքը ստորտելով , չափազանց անոնց մտնա

լով, աչքդ վրանին տնկելով կամ անոնց աթոռին կրթութիւնելով անոնք անհանգիստ մի՛ ընէր :

10. Անկիրթ տղու բան է առաջ անցնելու համար ուրիշը հրել, մարդու վրայ կրթութիւլ, շունչը անոր տալ, բթին կամ բերանին առջեւէն ճրագ կամ ուրիշ բան մարդու տալ :

11. Գանելու բան մը տեսնաս նէ՛ նայէ՛ տէյի մարդու չի ցուցունելէդ ՚ի զատ, անանկ ըրէ որ մարդ ալ չի տեսնայ, գէշ հոտ մարդու առջեւ մի՛ հաներ, մամ մի՛ մարեր, ու գէշ հոտ ունեցող բանը մի՛ տար մէկին հոտիտա տէյի :

12. Ինչէլն իբէն յանկարծ մէկին թաշկինակը ծաղրնելու համար քաշել, նստելն իբէն մէկուն աթոռը աստին առնել անիկայ ձգելու մտքով, գրպանէն թաշկինակը, թուղթերը կամ ինչ որ կայ նէ դուրս քաշել, ասոնք ալ մեծ կոպիտութիւններ են, յանկարծ մարդ վախցունելու տղայական խորամանկութիւններ՝ խաղեր ամենեւին չընես, վասն զի՛ ասանկ բաները կրըսքի մարդու վնաս տան :

13. Տղաքներուն հետ տեղ մը դանախած ատենդ, հոն քեզմէ տարիքով մարդ կան տէ կը խօրաթեն կոր նէ, մէկզմէկու հետ ձան ձուն չի հանելով խաղացէք :

14. Վեզմէ գաղտուկ եղած բանը հասկնալու մի՛ սրբտրտիր, նամակին հասցէին, մէկին ձեռքի գրած նամակին, բաց ձգած գիրքին կամ թուղթին վրայ աչք մի՛ տնկեր, տմարդութիւն է :

15. Գետնէն գրված թուղթ մը վերցունես նէ, մի՛ կարգար անիկայ, վրան չի նայած գրասեղանին վրայ դիր, կամ ո՛վ որ ձգեր է նէ անոր տուր, նամակ կամ ուրիշ գրված մը կրակընետեր են նէ՛ կրակէն մի՛ հաներ :

16. Սէկը տունը կամ սենեակը չեղած ատենը, ան

տունը կամ ան սենեակին մէջը նէ՛ պահանոց (տօլաս) բաց, նէ՛ մնտուկի խորշ (տէրէկ) նէ ալ՝ ուրիշ գոց բաներ, վասն զի՛ մեծ անկրթութիւն է, ան տղան որ քաղաքավար է գիրք մը անգամ չի պիտի բանայ տիրոջ մէն հրաման չառած. բարեկամին տունը երթայ նէ՛ անոր պարտիպին ծաղիկները չի պիտի բրցունէ, ծառին պտուղներուն չի պիտի դպչի :

Թէ՛ իր տունը թէ՛ մարդու մը տուն՝ ուրիշ ետ կենարեք գէշ սովը բութիւնները որո՞նք են :

1. Մարդու առջեւ քերտիտիլը՝ գլխուն մազերը շրտ կելը մարդավարութիւն չէ՛ :

2. Մատերովդ քիթդ մի՛ խառներ, գանելիք բան է. խնչելու ըլլաս նէ դաշկինակիդ մէջը խնչէ, կամ դաշկինակիդ մէկ ծարովը քիթդ սրբէ, բայց՝ զգոյշ կեցիր որ մարդ չի տեսնայ :

3. Քիթդ խնչել պէտք ըլլալուն պէս՝ կամացուկ մը խնչէ՛ որ քիթդ չի վազէ, ու բովիններուդ գանելիք չի գայ, ամօթ բան է ուժով խնչելը, փողի (պօռուի) պէս խօսեցրնելը ու քիթը վեր քաշելը :

4. Չեռքդ կամ դաշկինակդ երեսիդ բռնէ անանկ բռնգտս՝, թուքերդ նստողներուն վրայ կամ քու վըրադ մի՛ ցաթկեցուներ, ուժով բռնգտայն ալ անկրթութիւն է :

5. Քուրդ բռնգտացողին խէր ըլլս՝ մի՛ ըտեր, մի՛ միայն պարկեշտութեամբ խոնարհութիւն մը կրնես նէ ըրէ :

6. Պատուհանէն վար կամ կրակին մէջը մի՛ թուքներ, դաշկինակիդ մէջը թուք, վրան չինայած գոցէ՛, ան տըղան որ քաղաքավար է նէ, ջանս պիտի որ յաճախ (սրխ)

չի թուքնէ, որչափ որ կարելի է նէ: Պործված է որ շատ մարդ առաւել սովորու թիւն ընելուն յաճախ կը թուքնէ՝ քան թէ թուքը դալուն:

7. Եղունդներդ մի՛ կրճեր, դանելիք բաներու վրայ մի՛ խօսիր մի՛ անչնորհք բառեր բերանդ առներ:

8. Ամենեւին մարդու առջեւ առդաներդ մի՛ խառներ, եղունդներդ մի՛ կտրեր, ոտք ձեռք մի՛ լուար, ու վրայդ դլուխդ մի՛ շտկեր:

9. Ձեռքերդ աղտոտ է նէ նայէ որ մէկին երեսին ձեռքին լաթերուն չի դպցունես, վասն զի՛ հէմ կոպի տու թիւն բրած կրլաս, հէմ ալ մարդուն լաթերը աղտոտելովդ կը բարկացունես անիկա:

10. Կան անանկ անկիրթ մարդիկ որ դուրս ելլալէն ետքը ներս մանալն իքէն վրանին շտկելով կը մոնան, որ ինչխտար մեծ ամօթ բան է:

11. Նայէ՛ որ չի՛ երեժկտաս, քիթիդ տակէն բան չի երդես, ու չի սուլես (ըսլիս չալես), տկարութեան պատճառաւ կամ ուրիշ երեժկտացողի նայելով քեզի ալ երեժկտալ կուգայ նէ՛ ձեռքդ կամ դաշկինակդ բերանդ բռնէ՛ անանկ երեժկտա՛ որ մարդ չի կուահէ:

12. Սարդու մէջ մրաբելը, ոտքերը երկնցունել պառկելը քաղաքավարութենէ՛ դուրս բան է, ասոնք ընես նէ՛ սրտիդ նեղանալը կը ցուցունես նստողներուն, որ շատ աղէկ է ասանկ ընելուդ՝ ելլաս երթաս ան տեղէն:

13. Ոտքերդ զարնելով անչնորհք շարժմունքներ ընելով բարձր ձայնով մի՛ խնդար, ճակատդ մի՛ կնճուեր, տարակուսածի պէս դէմքով մի՛ նայիր բանի մը վրայ, վերջապէս ան կէտին ներսի դիդ ինտոր է նէ՛ դէմքիդ ցոյցքն ալ անոր նմանցու՛ր՝ հակառակը մի՛ ըներ որ ծաղրելի չըլլաս:

14. Որի վրայ ըլլա նէ՛ ըլլա՛, դուն ո՞վ եսի պէս նայե՛



լով խոժոռ աչքով մի՛ նայիր, խոժոռ աչքով նայիլը մեծերուն կը վայլէ, իրենցմէ պզտիկները սաստելու համար :

15. Շատ կրակին մի՛ մօտենար, պէտք չեղած իքէն կրակը մի՛ խառներ, տեղդ դուրսէն եկողներուն ու մտոյներուն տուր :

16. Կուզես որ հէ՛մ կոսպիտ չերեւաս, հէ՛մ ալ վտանգէ ազատ մնաս, ուտելու ու խամելու բանէն իզատ բերանդ բան մի՛ առներ, շատ պատահեր է որ մարդ գաւ մի պէս, ստակի պէս, ասեղի պէս, ու անոնց նման բաներ բերանը առեր է տէ, իր անխոհեմութեանը զոհ է եղեր :

Խօսակցութեան մէջ տղայի մը ի՛նչ զգուշանալու բաներ կան :

1. Իմաստունին մէկը կրտէքի՝ շատախօսութեան մի՛ իյնար, խօսքին տեղը չեղած մի՛ խօսիր, շատախօս եղողը մարդու նեղութիւն կը բերէ՝ մէկը անկէ չախորժիր, մէկ խելացի խօսքին տեղը՝ հարիւր անխելք խօսքեր կրնէ :

2. Մինչեւ որ քեզի բան մը չի հարցունեն նէ մի՛ խօսիր, ու միշտ պատասխան տուած մարդուդ վայլելիքին նայելով՝ պարոն, խաթուն, տուտու ըսելով սկսէ խօսքդ, պաղ բան է հայրս կուգայ կոր մի, եղբայրս հոս է մի ըսել, հապա՛ խաթուն, հայրս կուգայ կոր մի, տուտու, եղբայրս հոս է մի կը վայլէ ըսել :

3. Միշտ զուարթ երես եղիր, որ մարդոց հետ կը գրտնրվիս նէ՛ անոնց պատիւ ըրէ՛, միշտ մարդավարութեամբ ու զգուշութեամբ խօսէ հետերնին, հետդ խօ-

րաթերու համար մէկը քովդ գայ նէ՛ ոտքի վրայ ելիր :

4. Նայէ՛ որ երկդ իմի (թէ՛ ճնիս) հասկցողը բառերուն ետքը պարոն, խաթուն, տուտու չըսես. օրինակի համար՝ ի՛նչ ըսել է խող, պարոն. ո՞րն է գուռակ ո՞րն է էշ, խաթուն, մի՛ ըսեր. հասպա՛ խող ի՛նչ ըսել է, պարոն. խաթուն, ո՞րն է գուռակ ո՞րն է էշ ըսէ :

5. Բարձր ձայնով մի՛ խօրաթեր, մանաւանդ՝ քեզմէ վեր մարդու մը հետ խօրաթերու ըլլաս նէ՛ ինչ որ պիտի ըսես նէ շատ պարկեշտութեամբ ըսէ. մէկի մը բան մը ըսելու ըլլաս նէ՛ անուներ մի՛ տար. մի՛ ըսեր չը նորհակալ եմ պարոն Սուրէն. հասպա՛ շնորհակալ եմ ըսէ մինակ, անուներ չի տալով :

6. Մարդու ականջնիվար բան մի՛ ըսեր, թէ՛ որ քովդ մարդ նստեր է նէ. երկու հոգի ցած ձայնով մէկը զմէկու հետ կը խօրաթեն կոր նէ, դուն բան մը պատճառ բռնէ հեռացիր քովերնուն :

7. Քեզմէ մեծին խօսքին մի՛ խառնվիր, մէկուն խօսքը մի՛ կտրեր, քեզմէ վեր մարդուն ըսածին ատանկ է մի՛ ըսեր. թէ՛ որ աղէկ պիտի ըսես նէ՛ ընկերակցութեան (մէ՛ ճլտին) մէջ եղող մարդուն խօսքը ըրէ, չէ նէ մի՛ ըներ. որչափ որ կարելի է նէ՛ նայէ՛ որ դուն քու վրայովդ քիչ խօսիս, խնդալու բան մը պատմես նէ՛ առաջ դուն մի՛ խնդար :

8. Մարդը տուտ հանելէն գէշ բան չի կայ, մանաւանդ երբ որ խօսիւած բանին վրայով քեզի բան մը չեն հարցուներ նէ. գիտցած մէկ բանիդ վրայով դուն ի՛նչ կըսես տէ՛յի տեղ մը քեզի դառնայ մէկը հարցունէ նէ, անանկ մէկ պատասխան մը տուր որ, որի դէմ որ ճըշ մարտութիւնը ձեռքէ չի ձգելով պիտի խօսիս նէ՛ ան մարդը չի նեղանայ ամենեւին :

9. Ուրիշը խնդացունելու կամ դուն քեզ հանձարեղ

ցուցունելու համար մարդ մի՛ ծաղրեր, շատ ատեն  
մարդ խօրաթելուն կը դըջայ՝ բայց լուռ կենալուն բը-  
նաւ չի դըջար, ընկերակիցներուդ հետ ալ կատակ (չա-  
խա) կընես նէ՛ անանկ ըրէ որ սիրտերնին չի ծակես :

10. Կատակի ( շախայի ) համբերէ, ամմէն մարդ միշտ  
քեզի պատուեն տէյի ուղես նէ, կամ պղտիկ կատակի  
մը կամ անբաղաքալար բանի մը սրդողելը ցուցունես  
նէ՛ մէկը քեզ չուղեր :

11. Ինական պակասութիւն մը ունեցող մարդու մը  
վրայ ծաղրելով մի՛ խօսիր նոյն պակասութիւնը ունե-  
ցող մարդուն առջեւը, ուրեմն կուրին առջեւը կու-  
րի խօսք, կաղին առջեւը կաղի խօսք մի՛ ըներ :

12. Խօսքդ ըլլա տէյի երդում մի՛ ըներ, մէկը պատ-  
մած բանիդ ատանկ չէ՛ ըսէ նէ՛ ես գիտէի քի անանկ  
է ըսէ, գոցէ խօսքը :

13. Սէկը տրտմութեան բան մը պատմելն իբէն խըն-  
դալը, ըսել չուզած բանը մեկին ըսէ՛ ըսելը, ու անոր  
բերնէն անշնորհք պատասխան սկամայ հանել տալը  
մեծ անխոհեմութիւն է, մէկ՝ տունին խօսքը մէկալ  
տունը տանելը, իմ մտմտացածս շիտակ է տէյի պընդե-  
լը ( ինտտ ընելը ) ընկերին չուզած բաներուն խօսքը  
ընելը, միշտ ասոնք ալ չի վայելլու բաներ են :

Ճամբան ժուռ գալու տեղվանքը կամ ուրիշ հասարակաց տեղվանքը  
ինչպէս վարվելու է մարդու հետ :

1. Ինչպէս մասնաւոր ընկերութիւններուն մէջը՝ ա-  
նանկ ալ ճամբան ժուռ գալու տեղվանքը՝ ու հասա-  
րակաց տեղվանքը բան կայ ընելու, բան կայ չընելու :

Անանկ տեղվանքն ալ անվայելուչ բաներ ընելու չէ՛ , վասն զի՝ քեզ աղէկ մը չի ճանչցող մարդիկը քու վրագեւս առաւել խիստ դատողութիւններ կրնեն :

2. Ղամբան կամ ժուռ եկած ատենդ բան մի՛ ուտեր . ասիկա միայն խիստ պղտիկ տղայոց ներելի բան է , վասն զի միշտ ուտելիքի կարօտ են :

3. Կամայ խօսէ , քիչ խօսէ . մատով մարդ մի՛ ցուցուներ , որի համար կը խօսիս կոր նէ՛ չըլլն որ անունը տատ . վասն զի՝ կըլլա քի մէկը կը լըսէ տէ՛ կը կարծէ քի անիկա ծաղր ընելու ես ինկեր :

4. Քալէն իքէն գլուխդ շտակ բռնէ՛ պարկեշտութեամբ առջեւդ նայէ՛ , շատ ճամբայ պիտի քալեսի պէս խրդլանալով ձեռքերդ մի՛ տանիր բերեր , նէ՛ չափազանց արտորնօք , նէ՛ չափազանց ծանր քալէ՛ , ձեռքերդ ետեւդ մի՛ կապեր , ճեպդ ալ մի՛ դներ , մի՛ ցաթկուտեր , ոտքերդ մի՛ քսեր , ոտքովդ առջեւուդ ետեւուդ բան մի՛ նետեր :

5. Կրբոր բաղմութեան մը մէջ կը գտնվիս նէ՛ առաջ անցնիմ տէյի՛ առջեւդ գտնվող մարդիկը մի՛ հըրեր , խոնարհութիւնը ու պարկեշտութիւնը ան է որ անանկ տեղվանք մարդու չի դպչիս , միայն ձեռքդ քիչ մը առաջ տանիս քեզ պաշտպանելու համար :

6. Անկիրթ տղաքները՝ ի՞նչ կըլլա ըսելով՝ երբեմն պատուելու մարդիկներուն հետ կատակ ( շախայ ) կը նեն , որ ան կատակը նախատինքի պէս է ան մարդուն :

7. Կան անանկ լիբբ տղաքներ որ մարդուն կռնակը կամացուկ մը թուղթ կը փակցունեն , կիրով ( քիբէ՛ ճով ) բան կը գրեն , անցնող դարձողի վրայ ջուր կը սխմեն , ու ալ ուրիշ կերպ շատ չարութիւններ կրնեն խոհեմութիւնը ի՞նչ է , զգուշութիւնը ի՞նչ է չի նայել լով , որ մարդուն վրայ աս անշնորհք բաները կրնեն

նէ՛ ան մարդը անոնք չի կրնայ պատժել ալ նէ , աս  
 ի՛նչ գէշ տղաքներ են կրսէ անշուշտ :

8. Ա՛սանկ բաներ տեսած ատենդ խնդաս նէ , ըրած  
 ներսուն հաւներ ես տէյի կերեւայ , կերթայ անու  
 նըդ սէպէ .քի՛ անոնցինին հետ կը կտարի , անանկ է նէ  
 երբոր ասանկ սիրտ ծակելու բաներ կը տեսնես նէ՛  
 մի՛ խնդար որ ընտղն ալ երես չառնէ , ասանկ բանե  
 ըր ծերերուն ու անկար մարդիկներուն ընես նէ ա  
 ւելի անզգամութիւն ու կոպիտութիւն է :

Թ՛շուառ մարդուն վրայ ու անոր դժբաղդու  
 թեանը վրայ խնդալը անգութ մարդիկներուն մէջը  
 մէկ մեծ սովորութիւն մըն է եղեր . բայց խնդալին  
 շատ չի քշեր . վասն զի ասոր թ՛շուառ մարդը նախա  
 տողը՝ վաղը ինքը անկէ շատ ողորմելի պիտի ըլլա :

9. Ա՛նչցած մէկդ առջեւդ ելլայ տէ .քեզ բարեւէ  
 նէ՛ ինչխտար շատ պատուաւոր մարդ է նէ՛ բարեւը  
 այնչափ խոնարհութեամբ առ :

10. Ա՛ս մարդը քովդ գայ տէ ի՛նչ բան հարցունէ նէ ,  
 քաղաքավարութեամբ պատասխան տուր , ու նայէ  
 որ միշտ խօսքդ պարսն , խաթուն , տուտուով սկսես ,  
 ու անկէ զատված ատենդ ալ անոր նորէն խոնարհու  
 թիւն մը ըրէ :

11. Ա՛յնչեւ որ հիւանդ չըլլա կամ հիւանդութենէ  
 նոր ելած չըլլա նէ՛ քեզմէ վեր մարդուն որպիսու  
 թիւնը չես կրնար հարցուներ :

12. Ա՛ամբան մի՛ ետեւդ դառնար ուրիշին վրայ նա  
 յիր , վասն զի մարդուն անանկ կուգայ .քի անոր հագ  
 վածքին կամ շարժվածքին կամ մէկ ըրածին պակա  
 սութիւն մը պիտի գըտնաս :

13. Ա՛ռու գալու տեղվանքը քեզմէ վեր մարդու մը  
 քովէն քալես նէ՛ նայէ որ վար սեսված կողմէն քա

լեւ . երեք հոգի մէկ տեղ ճամբայ երթան նէ պատ  
ուաւոր տեղը երկուքին մէջ տեղն է , անկէ ստորին  
տեղը մէջ տեղէն գացողին աջ կողմն է . երկու հոգի  
մէկ տեղ երթան նէ՝ պատուաւոր տեղը միշտ աջ  
կողմն է :

14. Ղամբան պարիսպի մը կամ տան մը քովէն երթա  
լն իքէն՝ պատին մօտը վեր տեղն է , ուրիշ ատենը  
որ տեղը որ աւելի յարմար է նէ՝ ան տեղը մեզմէ  
վեր մարդուն կամ պատուել ուղած մարդիկներնուս  
պահելու եմք :

15. յուս եկած ատենդ ընկերդ մի՛ ձգեր տէ ա  
ռաջ երթար , ճամբու մը գլուխ եկած ատենդ պիտի  
դառնաս նէ՝ քովի մարդէդ առաջ մի՛ դառնար , դառ  
նալն իքէն ալ մի՛ կռնակդ անոր դարձուններ , երեսդ  
դարձուր :















p. 4.

7456

ya